Հայ Փոստ
Հայաստանի Փոստ

Ել.-ՀՓ/12755-2025

«26» 09 2025 թ.

ք. Երևան

#քոմարդիկամենուր

«Մեր Բուռնույան» ԱՁ-ԻՆ
ՀՎՀՀ՝ 40294242
Հասցե՝ ք. Երևան, Սարի-Թաղ 8-րդ շ. 167տ
Հեռ.՝ (+374) 99010746
Էլ.փոստ՝ burnuchyan.info@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Համաձայն 2025 թվականի օգոստոսի 07-ին «Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Մեր Բուռնույան» ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքված՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենաների ինքնակպչունների հեռացման ծառայությունների մատակարարման թիվ «ՀՓ-ԳՀԾՁԲ-25/43» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), Կատարող պարտավորվել էր մատուցել ավտոմեքենաների ինքնակպչունների հեռացման ծառայություններ՝ պայմանագիրը կնքվելուց 20 օրացույցային օր հետո՝ 21-րդ օրը:

2025 թվականի սեպտեմբերի 23-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից ստացվել է զեկուցագիր՝ համաձայն որի Կատարող չի կատարել աշխատանքները:

Գնորդի կողմից Պայմանագրով իրեն վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Կատարող կողմից չեն պահպանվել Պայմանագրի հետևյալ դրույթները՝ 2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքը, վերջինս ներառյալ՝ մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների թերություններով, ինչպես նաև պարտավորության բովանդակությամբ նախատեսված այլ պայմանների խախտմամբ կատարման դեպքերը:

Նույն Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ նման հրաժարումն

օրենքով կամ կողմերի համաձայնությամբ թույլատրվում է, պայմանագիրը համարվում է համապատասխանաբար լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով վերը նշվածը և ղեկավարվելով նշված իրավական դրույթներով՝ Գնորդը լուծում է թիվ «ՀՓ-ԳՀԾՁԲ-25/43» գնման պայմանագիրը՝ պատշաճ ծանուցման ապահովման նպատակով առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված կարգով:

7.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե վերջինս խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնումների գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որի հետևանքով պատվիրատուն միակողմանիորեն լուծել է պայմանագիրը կամ դադարեցրել տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին, ինչպես նաև այն դեպքում, երբ մասնակիցը սահմանված ժամկետում (հրավերով և/կամ պայմանագրով նախատեսված) չի վճարել հայտի, պայմանագրի և/կամ որակավորման ապահովման գումարը:

Նշված հիմքերի առկայության դեպքում, պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունված պատճառաբանված որոշման հիման վրա լիազոր մարմինը տվյալ մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե որոշման ներկայացման վերջնաժամկետի օրը մասնակիցը կամ պայմանագիր կնքած անձը վճարում է պայմանագրի և/կամ որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու վերաբերյալ պատճառաբանված որոշում չի ներկայացնում լիազոր մարմնին:

Հաշվի առնելով վերը ներկայացվածը՝ տեղեկացնում ենք, որ պայմանագրի միակողմանի լուծման արդյունքումապահովումների գումարը անհրաժեշտ է փոխանցել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից բացված **1930003703150100** հաշվեհամարին:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք, որ «ՀՓ-ԳՀԾՁԲ-25/43» ծածկագրով գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովման գումարները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնեք Գնորդին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե նշված գումարները փոխանցվեն Գնորդի կողմից բացված հաշվեհամարին, ապա Կատարողի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված սահմանափակումները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Կատ.՝ Տարոն Սանոսյան
Գնումների վարչության ղեկավար
Հեռ.՝ (055) 300022